

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,  
տնտեսագիտության դոկտոր



Դ.Վ.Հարությունյան  
28 նոյեմբերի 2022թ.

**ԿԱՐԾԻՔ**  
**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Արինե Տարոնի Ստեփանյանի «Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Մասնակցում էին՝** Դավիթ Հարությունյան՝ տնտեսագիտության դոկտոր, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտության թեկնածու, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Աշոտ Մարկոսյան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ստեփան Պապիկյան՝ տեխնիկ.գիտ.թեկնածու:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Տնտեսությունը մի ամբողջական համակարգ է, որի յուրաքանչյուր բաղադրիչ կատարում է որոշակի գործառույթ: Համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկում տեղ գտած խնդիրները արագորեն ազդում են ողջ համակարգի վրա: Ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել ՀՀ աշխատանքի շուկային, իսկ ավելի կոնկրետ զբաղվածության կարգավորման հիմնախնդիրներին: Զբաղվածության խթանման հարցում կարևոր է բոլոր գործոնների համադրումը: Սակայն, գործոնների ճիշտ ընտրության և համադրության համար աշխատանքի շուկայում անհրաժեշտ է

ողջամիտ տնտեսական քաղաքականության իրականացում: Շուկայական տնտեսության զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ աշխատանքի շուկան հանդիսանում է համաշխարհային շուկայական տնտեսության կարևորագույն տարրը: Աշխատանքի շուկան և զբաղվածության ոլորտը, որոնք արտացոլում են անցումային շրջանի հակասությունները, այսօր մեծ ազդեցություն ունեն աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունների վրա: Զբաղվածության կարգավորման արդիականացումը նպաստում է աշխատանքի շուկայում առկա ավանդական մոտեցումների վերանայմանը և նոր միջավայր է ստեղծում, որը բոլոր ոլորտներում պահանջում է զբաղվածության նոր քաղաքականության մշակում: Վերջինիս ընտրության հարցում մեծ նշանակություն ունի միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը կատարվել է աշխատանքի շուկային վերաբերող տարբեր մոդելների նկարագրության օգնությամբ: Այնուհանդերձ, զբաղվածության կարգավորման այնպիսի հարցեր, ինչպիսիք են համադրելի վիճակագրական տեղեկատվության գործոնային վերլուծությունը, շահառուների տեսանկյունից կարգավորիչ գործիքակազմի կիրառման արդյունավետության գնահատումները դեռևս իրենց լիարժեք լուծումները չեն ստացել ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական հետազոտողների աշխատություններում, որն էլ կանխորոշել է ինչպես ատենախոսության առջև դրված խնդիրները, այնպես էլ դրանց լուծումների գծով եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հետազոտության նպատակն է ՀՀ զբաղվածության մակարդակի համալիր վերլուծությունը և դրա վրա կարգավորիչ ազդեցության գործոնների գնահատման մեթոդաբանության մշակումը: Սույն նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ՀՀ աշխատանքի շուկայի հետազոտության կոնտեքստում ներկայացնել բնակչության զբաղվածության կարգավորման տեսական հիմքերը և գործառույթները,
- Աշխատաշուկայի և զբաղվածության կարգավորման մոդելների կիրառման միջազգային փորձի վերլուծության հիման վրա բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,
- վերլուծել զբաղվածության մակարդակի և դրա վրա ազդող մի շարք գործոնների փոխկապվածությունը և այս համատեքստում լուծել վիճակագրական տվյալների համադրելիության խնդիրը:

- վերլուծել զբաղվածության և տնտեսության կարևորագույն ցուցանիշների փոխկապվածությունը մակրոմակարդակում և տնտեսության առանցքային ճյուղերում,
- մշակել զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մոտեցումներ,
- շահառուների սպասումների տեսանկյունից առաջարկել զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման մեթոդաբանություն:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները հետևյալներն են.

- ՀՀ աշխատաշուկայի կառուցվածքային տեղաշարժերի գործոնային փոխառնչությունների հիման վրա առաջարկվել է անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել՝ ստոխաստիկ փոխկախվածությամբ ներկայացնելով ՀՆԱ-ի փոփոխությունների վրա գյուղատնտեսության և առևտրի ոլորտում զբաղվածության կարգավորման ներազդեցությունը, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ-ում զբաղվածության մակարդակի և մակրոտնտեսական ցուցանիշների կապի սերտության փոխառնչությունները, որոնք թույլ են տալիս կանխատեսելու զբաղվածության մակարդակի փոփոխությունները կախված դրամական տրանսֆերտներից, միջին աշխատավարձից, ներմուծման և արտահանման իրական ծավալներից:

- Մշակվել է զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է ընձեռնում զբաղվածության կարգավորման առանձին ոլորտների և գործիքների կիրառման ներազդեցության շնորհիվ ներկայացնելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման ուղղությունները:

- Շահառուների սպասումների հիման վրա առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն է ընձեռնում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխահամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորոյթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Բնակչության զբաղվածության և աշխատանքի շուկայի տեսամեթոդաբանական մեկնաբանումները» գլխում ներկայացվել են աշխատանքի շուկայի և զբաղվածության կարգավորման սոցիալ-տնտեսական մեկնաբանումների էվոլյուցիան, «Զբաղվածություն» և «աշխատանքի շուկա» հասկացությունների սահմանման մոտեցումները, զբաղվածության գնահատման և աշխատաշուկայի կարգավորման մեթոդական հիմնախնդիրները, ինչպես նաև զբաղվածության կարգավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում:

Ատենախոսության երկրորդ՝ «Զբաղվածության պետական կարգավորման հայեցակարգային հիմնախնդիրները» գլխում ներկայացվել է բնակչության զբաղվածության պետական կարգավորման միջոցառումների դասակարգումը, ինչպես նաև վերլուծվել են զբաղվածության վիճակագրական գործոնային մոտեցումները և ՀՀ աշխատանքի շուկայում զբաղվածության կառուցվածքային փոփոխությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատման բարելավման ուղիները» գլխում գնահատվել են ՀՀ-ում զբաղվածության մակարդակի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխառնչությունը, ինչպես նաև քննարկվել են զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատմանը առնչվող հիմնախնդիրների լուծումներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Հեղինակը գրել է զբաղվածության կարգավորման վերաբերյալ, սակայն ատենախոսության բովանդակության մեջ բացակայում է որևէ անդրադարձ զբաղվածության կարգավորման օրենսդրաիրավական հիմքերին: Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե ատենախոսը որևէ ենթահարցով անդրադարձ կատարեր ոլորտի օրենսդրաիրավական կարգավորման խնդիրներին:
2. Անհասկանալի կերպով է ձևակերպված ատենախոսության 11-րդ էջի նոր պարբերության 2-րդ նախադասությունը. «Որոշ գործատուներ, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն ընկել ֆինանսական վատթար վիճակի մեջ, նույնպես կրճատում են աշխատատեղերի արժեքի կրճատում, քանի որ դրանց գինը կապված է միջին շուկայական գնից, որը նվազման միտում ունի»:
3. Հեղինակը ատենախոսության մեջ օգտագործում է շահառու եզրույթը սկսած բովանդակության 3.3 ենթահարցից մինչև գիտական նորույթ և ատենախոսության ընթացքում շարադրվածից, հասկանալի չէ՝ ո՞ւմ նկատի ունի շահառու ասելով: Միայն ատենախոսության 120-րդ էջի 2-րդ պարբերությունից և գծապատկեր 3.3.1-ից է պարզ դառնում, որ հեղինակը շահառուների շրջանակ ասելով նկատի ունի «բոլորին» (լինի գործատու, թե աշխատող): Եվ քանի որ ցանկացած միջոցառում ունի իր շահառուն, հետևաբար «համատարած բոլորը» չեն կարող լինել միևնույն միջոցառման շահառու: Ստացվում է, որ կարգավորմանն ուղղված միջոցառումը չունի հասցեականություն:
4. Ատենախոսությունում առաջարկվել է անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել, մինչդեռ կարծում ենք, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը «վստահության աստիճան» եզրույթը ձևակերպեր այլ կերպ, օրինակ «ստացվել է վիճակագրորեն նշանակալի մոդել, կամ առաջարկվել է ռեգրեսիոն մոդել, որը լավ որակի է»:
5. Եզրակացություններ և առաջարկություններ բաժնի 1-ին ենթակետում հեղինակը ներկայացրել է զբաղվածության բարդ սոցիալ-տնտեսական կատեգորիա լինելը, այն դեպքում երբ այդ նույն նախադասությամբ սկսվում է 1.2 գլուխը էջ 14: Ստացվում է, որ ատենախոսը նկարագրում է զբաղվածություն կատեգորիան, այլ ոչ թե եզրակացնում:
6. ՀՀ զբաղվածության կարգավորման հիմնախնդիրների մեջ առանձնահատուկ տեղ ունի աշխատանքային միգրացիային առնչվող հիմնահարցերը, որոնք ըստ էության բացակայում են աշխատանքում: Աշխատանքի 1.4 ենթահարցում ատենախոսը գրում է առաջավոր փորձի մասին, սակայն բացակայում է որևէ անդրադարձ ոլորտին առնչվող միջազգային զեկույցներին: Կարծում ենք, որ աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե

ատենախոսը ուսումնասիրեր և անդրադառնար ոլորտին վերաբերող միջազգային առնվազն մի քանի զեկույցի:

7. Ատենախոսության էջ 118 հղում 164 հեղինակը օգտվել է գլոբալ մրցունակության համաթվից: Աշխատաշուկային առնչվող ցուցիչը՝ համապատասխան գլոբալ մրցունակության համաթվի 8-րդ ցուցիչն է: Անհասկանալի է, թե ատենախոսը որտեղից է վերցրել աղյուսակ 3.3.1-ում տեղ գտած ՀՀ աշխատաշուկայի արդյունավետության համաթվի բաղադրիչները, որոնք բացակայում են գլոբալ մրցունակության ինդեքսում:
8. Ատենախոսությունում առկա են բովանդակային, տեխնիկական և այլ բնույթի թերություններ, մասնավորապես. ատենախոսության մեջ որոշակի հղումներում, օրինակ՝ 166, 167, 168 նշված է «կազմել է ատենախոսը», մինչդեռ, մեր կարծիքով, ճիշտ կլիներ ձևակերպել՝ կազմվել է հեղինակի կողմից: Գրականության ցանկը կազմված է անփույթ, քանի որ որոշ իրավական ակտերի լրիվ անվանումներով ներկայացված է, օրինակ՝ գրականության ցանկում թվով 1-ը, 2-ը, 3-ը, սակայն արդեն հաջորդները, մասնավորապես՝ 4-ը, 5-ը ներկայացված է բացված վիճակում: Աշխատանքում առկա են բազմաթիվ տառասխալներ և մտքերի սխալ ձևակերպումներ, մասնավորապես էջ 23, 24 և այլն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արինե Տարոնի Ստեփանյանի «Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում վեր են հանվել Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության կարգավորման հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղիներ: Աշխատանքում տեղ գտած թերությունները էապես չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում Հայաստանի զբաղվածության կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Արինե Տարոնի Ստեփանյանի «Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (28.11.2022թ., արձանագրություն թիվ 32):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ  
ավագ գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու

Շ. Պողոսյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու

Տ. Փարսադանյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու  
Շ. Պողոսյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու  
Տ. Փարսադանյանի ստորագրությունների իսկությունը «հաստատվում են»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,  
տնտեսագիտության թեկնածու,

Ե. Ա. Հակոբյան

«28» նոյեմբերի, 2022թ.

